

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատմութեան նշանաւոր դէպքերը առաջ են բերում կեանքի նոր երևոյթներ: Անցեալ տարուայ Հոկտեմբերի 17-ի հրովարտակը, որ Ռուսիոյ նորագոյն պատմութեան մէջ մի շատ նշանաւոր դէպք է, ի թիւս այլ երևոյթների, մեծ փոփոխութիւն մտցրեց և պարբերական մամուլի վիճակի մէջ:

Թերթ հրատարակելու իրաւունք ստանալը մինչև այդ հրովարտակը ամենադժուար գործերից մինն էր համարուում: Յաջողութեան դէպքում խմբագիր-հրատարակիչների համար ամենամեծ աօնն էր. որովհետև խօսելու և գրելու հնարաւորութեան հետ մէկ տեղ, թերթի տէրը նոյն իսկ նիւթապէս էր շահուում այն կողմից, որ թերթի իրաւունքը միշտ կարող էր տաանեակ հազարներով ծախուել:

Այժմ թերթի իրաւունք ձեռք բերելն արժէ միայն 3 ուրբլու մարկա:

Այս դիւրութիւնը հարիւրաւոր նոր թերթերով հարստացրեց Ռուսաստանի մամուլը:

Մեծ փոփոխութիւն մտաւ և հայ մամուլի կեանքի մէջ: Հանդէս եկան ու հանդէս են գալու նոր օրաթերթեր, շաբաթաթերթեր: Հասարակական կեանքի հրատապ խնդիրների լուծման պահանջը միակերպ մտածողների խմբեր է առաջ բերում, որոնցից իւրաքանչիւրն աշխատում է իւր սեպհական օրգանն ունենալ: Որովհետև փառասիրութիւնն ու մօզան էլ մեր կեանքումը աննշան դեր չեն խաղում, ուստի և լրագրների աճման գործում աննշան դեր չեն խաղում, ուստի և լրագրների աճման գործում անմասն չեն: Այսպէս թէ այնպէս հայ պարբերական մամուլը աճում է թուով:

Մինչև 1905 թ. երկրորդ կէսը Կովկասի հայալեզու թերթերն էին «Նոր-Պար», «Մշակ», ամսագրերը՝ Լուսայ, Մուրճ, Աղբիւր, Շաբաթաթերթ՝ Տարազ. երկշաբաթ.՝ Առողջապահիկ,

Նոր աւելացել են «Արշալոյս», «Յառաջ» օրաթերթերը, «Ընկեր» Հովիւ, շաբաթաթերթերը, Շուտով լոյս են տեսնելու «Հայրենիք» օրաթերթն և նոյնանուն ու «Աշխատանք» շաբաթաթերթերը, «Կուկուրիկու» և «Սափրիչ» երգիծաբանական թերթերը: Անշուշտ ետևից գալու են և ուրիշ տեսակ տեսակ թերթեր:

Երևոյթն ուրախալի է, որովհետև հիւ չի կամենայ որ իւր ազգի գրականութիւնը մամուլի նոր տեսակներով ճոխանայ, հայ ընթերցողների թիւն աւելանայ, ազգը կենսական խնդիրներով զբաղուի և այլն:

Սակայն ամենավսեմ գաղափարներն ինչպէս ամենաքնքոյշ ծաղիկը կոպիտ ձեռքերով, հասարակ շարժառիթով արագապէս աղաւաղուել, փչանալ կարող են: Մենք հոգով ցանկանում ենք որ մեր նոր խմբագիրները լոկ մաքուր շարժառիթներով, այսինքն յանուն գաղափարի և ոչ անձնական շահի կամ փառասիրութեան համար հրատարակէին իրենց թերթերը: Մի երկու խօսք նոր թերթերի մասին:

«Հովիւ» հոգևոր-բարոյական շաբաթաթերթը իւր համար նպատակ է դրել մեր եկեղեցու կենսական խնդիրների լուծումը, բարեկարգութիւնը, եկեղեցականութեան վիճակի բարձրաւումը, այսինքն այն՝ ինչ որ պիտի անէր ս. Էջմիածնի պաշտօնական «Աբարատը», որի ձայնը էլ չի լսում: Նշանակալից են, ուստի և առանձին շեշտով ենք արտատպում խմբագրի հետեւալ խօսքերը:

Ամեն միւր եկեղեցական դասից իր ասելիքը, ցաւը, դարդն ու նեղութիւնները կարող է Հովիւի միջոցով հրապարակել վրայ դնել և հասարակաց դատաստանին լանձնել՝ հաստատ համոզուած լինելով, որ անիրաւութիւնը, անարդարութիւնը, սիւմոնականութիւնը, կամայականութիւնը և առհասարակ ամեն մի թշնամական գործողութիւն շարունակ կհարուածուին, զրկանք կրողները և հալածուածները կպաշտպանուեն...

Իցիւ թէ այդպէս տանէր Հովիւն իւր գործը:

«Ընկեր» հասարակական-գրական շաբաթաթերթը նպատակ է ընտրել ծառայել «Երրորդ և չորրորդ դասակարգերի»՝ դիւղական և բանտրական դասի վիճակի բարւոքմանը: Նա առանձնապէս շեշտում է մի «հինգերորդ դասակարգ» մի ամենատառապեալ դասակարգ՝ հայ ժողովուրդը, որին «աններելի յանցաւորութեամբ մոռացութեան են տալիս երոպական բոլոր առաջադէմ գործիչները»:

«Ընկերը» իւր գաղափարներով բաւական տարբեր է մեր

արդի սովորական մամուլից. նա ուխտում է ծառայել լոկ դա-
ղափարին, մերժում է անձնական շահը, յենում է աւելի մըտ-
քի և հոգու վերածնութեան վրայ, որ միակ ուղիղ միջոցն է
կեանքի վերածնութեան, քան քաղաքական հանգամանքների
և արտաքին երևոյթիւնների:

Այսպէս է մեր ստացած ընդհանուր տպաւորութիւնը «Ըն-
կերի» 1 համարից:

«Յառաջ» օրաթերթը մինչև այժմ միայն մի քանի համար
«Լրատու» է հրատարակել: Թերթի հրատարակութիւնը մօտ
օրերս սկսուելու է: Հրատարակութիւնից յետոյ կ'իսոսնք թէ
նրա և թէ հետզհետէ հրատարակուելիք թերթերի մասին:

Բոլորին էլ սրտով յաջողութիւն ենք ցանկանում, եթէ միայն
իրենց ընտրած նպատակներին հաւատարիմ են մնալու և
բարձր են պահելու մամուլի դիրքը:

Լոյս են տեսել պ. Եղիշէ Թոփչեանի 1906 թ. պատի և
ծոցի օրացոյցները: Պ. Թոփչեանն առհասարակ իւր օրացոյց-
ները հնարաւորութեան չափով ճոխ բովանդակութեամբ է տա-
լիս: Պատի օրացոյցի տախտակն այս տարի զարդարուած է
հայ խմբագիրների պատկերներով: